ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից։

ՔԴՕ 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, գործի քննության հետ կապված այլ ծախսեր են գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները։

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում։

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը։»։

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն։

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանն արձանագրում է, որ հայցի մերժմամբ պայմանավորված դատական ծախսը կրում է Հայցվոր կողմը և հաշվի առնելով պետական տուրքի նախապես վճարված լինելու հանգամանքը, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված։

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

ՎՃՌԵՑ

1. Հայցը մերժել։

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված։

3. Վճիռը մտնում է օրինական ուժի մեջ հրապարակման պահից և ենթակա է բողոքարկման ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում։

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEB4-8216-4D6D-BA07 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am